ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անահիտ Մշեցյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն), 2023 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 20-ը:

3. Հրավիրող կողմը.

Վիեննայի միացյալ ինստիտուտ.

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Հարկային կարգապահության ռիսկերի կառավարում/Tax Compliance Risk Management» թեմայով դասընթացի նպատակն էր զարգացնել և խորացնել հարկային վարչարարության մեթոդաբանության մշակման հմտությունները, ծանոթանալ վերջինիս արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված CRM համակարգին:

5. Քննարկված թեմաները.

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) CRM համակարգի նպատակը և կարևորությունը,

2) CRM համակարգի ռազմավարական դերը.

3) Հարկային համապատասխանության ռիսկերի կառավարման գործընթացը.

- Ռիսկերի բացահայտում, գնահատում և առաջնահերթությունների որոշում,

4) Տվյալներ և տվյալների կառավարման կարևորությունը.

- CRM համակարգում օգտագործվող տվյալների տեսակներ,
- օրենդրական դաշտ,
- տվյալների կառավարմանն աջակցելու գործիքներ,
- տվյալների և տվյալների կառավարման գնահատում և բարելավում,

5) Կազմակերպչական և կառավարման պայմանավորվածություններ.

- կազմակերպչական կառուցվածքը և գործընթացները,

- դերեր և պարտականություններ,
- կառավարում՝ մոնիթորինգի արդյունքներ,

6) Առաջնորդության և փոփոխությունների կառավարման ապահովում.

- CRM համակարգի ներդրում կազմակերպության մեջ,
- CRM կարողությունների ձևավորում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ժամանակ ելույթներն իրականացվել են գործնական աշխատանքների, քննարկումների տեսքով, որոնց ընթացքում պարզաբանվել են հարկային համապատասխանության ռիսկերի կառավարման համակարգի առանձնահատկություններն ու խնդիրները:

Մասնակիցների կողմից ներկայացվել են նաև շնորհանդեսներ կոնկրետ երկրների օրինակներով:

Ընդհանուր առմամբ դասընթացը բավականին հետաքրքիր էր: Դասընթացից ստացված գիտելիքները կօգտագործվեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետագա աշխատանքներում:

Բոլոր դասախոսությունները իրականացվել են շնորհանդեսների միջոցով՝ մասնակիցների ակտիվ ներգրավմամբ: Կազմակերպվել են խմբային աշխատանքներ և մասնակիցների կողմից կատարված աշխատանքների հիման վրա պատրաստվել ու ներկայացվել են շնորհանդեսներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

Ստորագրությունը, ամսաթիվը: **23.10.2023թ.**